



«05» հունիսի 2012թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

№

111

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ)  
ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՏԱԼՈԳԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1  
հոդվածի համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել բնակելի կառուցապատման օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կատալոգը («Բնակելի կառուցապատման օբյեկտների (անհատական բնակելի տների և դրանց կից տնտեսական և օժանդակ շինությունների) օրինակելի նախագծերի կատալոգի և շինարարական գործունեության իրականացման ընթացքի վերաբերյալ գործնական խորհրդատվությունների ձեռնարկից կազմված ալբոմի լրամշակում, ձևավորում» աշխատանքը, պայմանագիր՝ ՀՀ ՔՆ ԱՇՁԲ-11/59) և այն ընդունել կիրառման:

2. Նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հ. Պետրոսյանին՝ կատալոգները, դրանցում ընդգրկված բնակելի կառուցապատման օբյեկտների նախագծային փաստաթղթերն ու ձեռնարկը տեղադրել նախարարության պաշտոնական կայքում:

3. Նախարարության աշխատակազմի ճարտարապետության վարչության պետ Ս. Մկրտչյանին՝ կատալոգները, դրանցում ընդգրկված բնակելի կառուցապատման օբյեկտների նախագծային փաստաթղթերն ու ձեռնարկը էլեկտրոնային կրիչներով տրամադրել Հայաստանի Հանրապետության մարզպետներին և Երևանի քաղաքապետին:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Նախարար՝

Վ. Վարդանյան

Իսկականի հետ ճիշտ է



«05» 11 2012թ.  
ք. Երևան ~